11.	Ա/Ձ «Անահիտ Վարդանյան»	Լեռնանիստ 4-րդ թ-ս, տուն 33	Լեռնանիստ 2-րդ փ 52/1	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար

12.	Ա/Ձ «Անահիտ Վարդանյան»	Լեռնանիստ 4-րդ թ-ս, տուն 33	Լեռնանիստ 2-րդ Կ. 52/1	Ժխախտային արտադրատեսակների կամ ծխախտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախտային արտադրատեսակների նմանակների վաճառք ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
13.	Ա/Ձ «Լուսինե Մինասյան »	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 88/42	Ք. Հրազդան, Պուրակային 36	Հանրային սննդի կազմակերպում	մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
14.	Ա/Ձ «Լուսինե Մինասյան »	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 88/42	Ք. Հրազդան, Պուրակային 36	Հանրային սննդի կազմակերպում	մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
15.	Ա/Ձ «Տիգրան Մարգարյան»	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 30/46	Ք. Հրազդան, Վարչական շենքին հարող տարածք	ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
16.	Ա/Ձ «Տիգրան Մարգարյան»	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 30/46	Ք. Հրազդան, Վարչական շենքին հարող տարածք	Հանրային սննդի կազմակերպում	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
17.	«Զեբոա Ֆուր» ՍՊԸ	Ք. Հրազդան, Վանատուր 371	Ք. Հրազդան, Վանատուր թիվ 371	Հանրային սննդի կազմակերպում	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

31 հուլիսի 2023 թվականի N 891

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Եղիազար Զորկինի Բարբարյանի 2023 թվականի հուլիսի 26-ի դիմումը, բանվորների և ծառայողների այգեգործական ընկերության կողմից 1992 թվականի օգոստոսի 18-ին տրված այգեգործի անդամատոմսը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023JUS2EL ծածկագիրը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**

1. Օրինական ճանաչել Եղիազար Զորկինի Բարբարյանին պատկանող Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ թաղամասում գտնվող 500.0 քմ հողամասում ինքնական կառուցված 45.50 քմ արտաքին մակերեսով այգետնակը:
2. Հողամասի սահմանները որոշվում են ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Ինքնական կառուցված այգետնակը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:
4. Եղիազար Զորկինի Բարբարյանին պատկանող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 4-րդ փողոց 42:
5. Ինքնական կառուցված այգետնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:



6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

31 հուլիսի 2023թ.  
ք.Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
(0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

31 հուլիսի 2023 թվականի N 892

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՀԵՆԱՊԱՏԻ  
ՕՐԻՆԱԿԱՆ ԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Գագիկ Լևիկի Բարսեղյանի 2023 թվականի հուլիսի 26-ի դիմումը, բանվորների և ծառայողների այգեգործական ընկերության կողմից 1992 թվականի օգոստոսի 5-ին տրված այգեգործի անդամատոմսը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20234Y4PHX ծածկագիրը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Օրինական ճանաչել Գագիկ Լևիկի Բարսեղյանին պատկանող Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ թաղամասում գտնվող 500.0 քմ հողամասում ինքնական կառուցված 80.5 քմ արտաքին մակերեսով այգետնակը, ինքնական կառուցված 3.83 քմ մակերեսով հենապատը:
2. Հողամասի սահմանները որոշվում են ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Ինքնական կառուցված այգետնակը, ինքնական կառուցված հենապատը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:
4. Գագիկ Լևիկի Բարսեղյանին պատկանող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 3-րդ փողոց 25:
5. Ինքնական կառուցված այգետնակի, ինքնական կառուցված հենապատի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

կառուցված չեն ինժեներատորանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հուլիսի 2023թ.  
ք.Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 օգոստոսի 2023թվականի N 893

**ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ**  
**ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 03062021-07-0200, գաղտնաբառ՝ MBIZ3KDCRHPQ/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող հողամասի 0.53056հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 7/1, 0.65063հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 3-րդ փողոց 7/2, իսկ 1.58047հա մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 7:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՎԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
(0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 օգոստոսի 2023թվականի N 894

**ՄՈՒՇԵՂ ՄԽԻԹԱՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Ա. Գալեչյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Մեծամոր համայնքի Այգեշատ բնակավայրի 1 փողոց 16 տան բնակիչ՝ Մուշեղ Մխիթարի Գաբրիելյանը ոչ սահմանված վայրում իրականացնում է փողոցային առևտուր՝ ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով այն է ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Մուշեղ Մխիթարի Գաբրիելյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում Մուշեղ Գաբրիելյանը հայտնել է, որ այդ քայլին դիմել է հանապազօրյա հաց վաստակելու համար և զոջում է կատարած իրավախախտման համար, ինչպես նաև նշել է, որ իր խնամքի տակ են գտնվում երեք անչափահաս երեխաները և տան միակ աշխատողն է: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, ինչպես նաև Մուշեղ Գաբրիելյանի սոցիալական ծանր վիճակի փաստը հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է վերջինս, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն և իրավախախտումը կատարվել է ընտանեկան

ծանր հանգամանքների զուգադիպությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 1-ի N 57 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Մուշեղ Մխիթարի Գաբրիելյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մուշեղ Մխիթարի Գաբրիելյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՎԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



01 օգոստոսի 2023թ.  
ք.Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 օգոստոսի 2023թվականի N 895

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Կ. Յուզունյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 63 շենքի 5 բնակարանի բնակիչ՝ Նիկալ Աշոտի Խաչատրյանը զբաղվում է փողոցային առևտրով՝ չունենալով համապատասխան թույլտվություն:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Նիկալ Աշոտի Խաչատրյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում Նիկալ Խաչատրյանը հայտնել է, որ դեռևս 2004 թվականին Հրազդանի քաղաքապետարանի և իր միջև կնքվել է հողի վարձակալության պայմանագիր, որի ժամկետը լրանում է 2031 թվականին: Միաժամանակ Ն. Խաչատրյանը հայտնել է վերը նշված վարձակալական հիմունքներով հողամասի վրա՝ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 63 շենքի դիմաց, ունի տաղավար և զբաղվում է մրգերի և բանջարեղենի մանրածախ առևտրով /«Սուսաննա Խաչատրյան ԱՁ» 85.947974, 01.03.2017թ., ՀՎՀՀ 40560599/: Ն. Խաչատրյանը հայտնել է, որ առևտրով զբաղվում է միայն տաղավարում, իսկ ոստիկանության աշխատակիցների կողմից արձանագրվածը չի կարող համարվել փողոցային առևտուր, քանի որ ապրանքները խանութ տեղափոխելով պայմանավորված ավտոմեքենան կայանում է այնտեղ և դատարկում եղած ապրանքները: Ն. Խաչատրյանը հայտնեց, որ ինքը դեմ է փողոցային առևտրին և օրենքով սահմանված կարգով կատարում է բոլոր հարկային վճարումները և աշխատում է օրինական դաշտում: Վարչական վարույթի ընթացքում Ն. Խաչատրյանի կողմից ներկայացվել են ապացույց հանդիսացող մի շարք փաստաթղթեր, որոնք փաստում են վերջինիս օրինական գործունեությունը: Միաժամանակ Ն. Խաչատրյանը վարչական մարմնին է ներկայացրել տեղեկանք տրված «Կենտրոն Ա-1» համատիրության կողմից համաձայն որի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 63 շենքին հարող տարածքում գտնվող առևտրի տաղավարը սեփականության իրավունքով

պատկանում է վերջինիս և այնտեղ գրառվում է մրգերի և բանջարեղենի առևտրով: Ն. Խաչատրյանը վարույթի ընթացքում խնդրել է կարճել վարչական վարույթը, քանի որ ըստ էության բացակայում է վարչական իրավախախտման դեպքը: Ուսումնասիրելով վարչական վարույթի փաստաթղթերը և դրանցում առկա փաստական հանգամանքները՝ վարույթն իրականացնող մարմինը փաստում է, որ չի հաստատվել Ն. Խաչատրյանի կողմից փողոցային առևտուր իրականացնելու փաստը, որպիսի պայմաններում վարույթն իրականացնող մարմինը գտնում է, որ սույն դեպքով վերջինիս նկատմամբ վարչական ակտ ընդունելու հիմքերն, ըստ էության բացակայում են՝ վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով, հաշվի առնելով նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում... վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը.../:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասով, 251-րդ հոդվածի դրույթներով, 281-րդ և 282-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 1-ի N 56 արձանագրությունը.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Նիկալ Աշոտի Խաչատրյանի նկատմամբ կազմված արձանագրության հիման վրա հարուցված գործի վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նիկալ Աշոտի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՎԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

01 օգոստոսի 2023թ.  
ք.Հրազդան







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 օգոստոսի 2023թվականի N 896

**ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

- 1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
  - 1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ավկոհոլային խմիչքների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,
  - 2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,
  - 3)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ավկոհոլային խմիչքների իրացման՝ 2 /երկու/ հատ,
  - 4)հանրային սննդի կազմակերպում՝ 3 /մեկ/ հատ,
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**



01 օգոստոսի 2023թ.  
 ք.Հրազդան

Հավելված  
Հրազդան համայնքի ղեկավարի  
2023 թ. օգոստոս 01-ի  
N 896 որոշման



**ՑՈՒՑԱԿ**  
**ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՎԱՐՈՒՄ**

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպատիրական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեղական տուրքի տեսակը	Շրջանի տեսակը, մակերեսը՝ քառ/մ	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը
1.	Ա/Յ «Արսեն Ավետիսյան»	Ք. Հրազդան, Ջրատատ 98ա	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շուկային հարող տարածք	ոգելից և ակտիոլային խմիչքների վաճառք	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
2.	Ա/Յ «Արսեն Ավետիսյան»	Ք. Հրազդան, Ջրատատ 98ա	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շուկային հարող տարածք	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային նմանակների վաճառք	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
3.	Ա/Յ «Անակ Յախշիբեկյան»	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 30/60	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 89/2	ոգելից և ակտիոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
4.	Ա/Յ «Անակ Յախշիբեկյան»	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 30/60	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 89/2	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային նմանակների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
5.	Ա/Յ «Լենա Վարդանյան»	Գեղարքունիքի մարզ	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս շենք 38 հարող տարածք	ոգելից և ակտիոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
6.	Ա/Յ «Լենա Վարդանյան»	Գեղարքունիքի մարզ	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս շենք 38 հարող տարածք	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային նմանակների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար

7.	Ա/Ձ «Լուսինե Մանուկյան»	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 14/12	Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5-րդ փ., թիվ 4	Գրեմից և ավտոհոլային խմբիցների իրացում	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի Երրորդ եռամսյակի համար
8.	Ա/Ձ «Բնարիկ Շխոյան»	Ք. Հրազդան, Ա. Խաչատրյան 25/1	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 35 հարող տարածք	Հանրային սննդի կազմակերպում	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի Երրորդ եռամսյակի համար
9.	Ա/Ձ «Մուսանա Պետրոսյան»	Ք. Հրազդան, Վ. Աղբյուրակ, 38	Ք. Հրազդան, Վ. Աղբյուրակ	Գրեմից և ավտոհոլային խմբիցների իրացում	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի Երրորդ եռամսյակի համար



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 օգոստոսի 2023թվականի N 897

**ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրաչիկ Բարսեղյանի 2023 թվականի հուլիսի 25-ի դիմումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

- Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 185 տան բնակիչ Հրաչիկ Բարսեղյանին պատկանող / Ժողովրդական պատգամավորների Հրազդանի Քաղխորհրդի գործկոմի 1991 թվականի հուլիսի 26-ի արձ.նո. 6 քաղվածք/ Հրազդան քաղաքի Աթարբեկյան թաղամասում գտնվող հողամասին (ծածկագիր՝07-001-0555-0024-ից) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամասի Պուրակային փողոց, 7-րդ նրբանցք 8:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**



01 օգոստոսի 2023թ.  
 ք.Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 օգոստոսի 2023 թվականի N 898

**ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Ջոյա Մկրտչյանի 2023 թվականի հուլիսի 25-ի դիմումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Ավետիք Մկրտչյանին (ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական ԲԱ731449, տրված՝ 2023 թվականի հուլիսի 20-ին) սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1792987, տրված՝ 2005 թվականի ապրիլի 22-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 31 շենքին հարող տարածքում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 31/2:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**



01 օգոստոսի 2023թ.  
 ք.Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 օգոստոսի 2023թվականի N 899

**ԱՌԵՎՏՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԻԱՎՈՐՎԱԾ  
 ՇԵՆՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Վոլոդյա Ղազարյանի 2023 թվականի հուլիսի 21-ի դիմումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Նարեկացու փողոց թիվ 48 տան բնակիչ Վոլոդյա Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 13092021-07-0058, գաղտնաբառ՝ ICCBDTQACAJD և N 20062023-07-0124, գաղտնաբառ՝ 1BQQA1ATXHBF/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա 4/2 և Հրազդան քաղաքի Զորավար Անդրանիկի պողոտա 6 հասցեներում գտնվող առևտրի հանրային սննդի և կենցաղային սպասարկման միավորված շենքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Զորավար Անդրանիկի պողոտա 6:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
(0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 օգոստոսի 2023թվականի N 900

**ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱ ԶԷ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 օգոստոսի 2023 թվականի N 901

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՅԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով, հիմք ընդունելով Ռադիկ Մկրտչյանի 2023 թվականի հուլիսի 28-ի դիմումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

- Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ թաղամասի թիվ 30 տան բնակիչ Ռադիկ Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1271952, տրված՝ 2005 թվականի հունվարի 25-ին) Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ 30 հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղամաս 30/1 հասցեով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

02 օգոստոսի 2023 թ.  
 ք. Հրազդան







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 օգոստոսի 2023 թվականի N 902

**ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով էլմեն Ծառուկյանի 2023 թվականի հուլիսի 31-ի դիմումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Երևան քաղաքի Կորյունի փողոց 21 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ էլմեն Ծառուկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 31072023-07-0060, գաղտնաբառ՝ IU2YL2PD3CBM/ Հրազդան քաղաքի Մաքրավան հյուսիս-արևմտյան թաղամաս 61 հասցեում գտնվող հողամասի 0.27370հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան հյուսիս-արևմտյան թաղամաս 61/1 , իսկ մյուս 0.27370հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան հյուսիս-արևմտյան թաղամաս 61:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**



02 օգոստոսի 2023 թ.  
 ք. Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 օգոստոսի 2023 թվականի N 903

**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ**  
**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Վայա Մարգարյանի 2023 թվականի հուլիսի 21-ի դիմումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

- Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 549 տան բնակիչ Վայա Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 15072022-07-0136, գաղտնաբառ՝ C8QBNVVQLAXC և N 15072022-07-0153, գաղտնաբառ՝ V5YM4D3ZZIXU/ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 549/1 և 549 հասցեներում գտնվող միավորված բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 549 :
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**



02 օգոստոսի 2023թ.  
 ք.Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
(0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 օգոստոսի 2023թվականի N 904

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՊԱՐՄՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ  
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջով և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով <<Հարշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023WUGWBU ծածկագիրը և Դավիթ Ղարիբյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոց թիվ 42 տան բնակիչ Դավիթ Շավարշի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 2517478, տրված՝ 2008 թվականի փետրվարի 7-ին) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Շահումյան և Րաֆֆու փողոցներին հարող տարածքում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Րաֆֆու փողոց, 3-րդ նրբանցք 2/1:

2. Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Շահումյան փողոց թիվ 42 տան բնակիչ Դավիթ Շավարշի Ղարիբյանի կողմից Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Րաֆֆու փողոց 3-րդ նրբանցք 2/1 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 2517478, տրված՝ 2008

թվականի փետրվարի 7-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնական կառուցված 244.39քմ արտաքին մակերեսով բնակելի տունը՝ օրինականացման վճարը սահմանել 318 000 (երեք հարյուր տասնութ հազար) դրամ, 14.51քմ մակերեսով պարիսպը՝ օրինականացման վճարը սահմանել 19 000 (տասնինը հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:

3.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 օգոստոսի 2023թ.  
ք.Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
(0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

02 օգոստոսի 2023թվականի N 905

**ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023ՐՍՍՄԻԻ Ծածկագիրը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0146-0161 ծածկագրով բազմաբնակարան բնակելի շենքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 81:
2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 81 հասցեում գտնվող 420.45քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության բազմաբնակարան բնակելի շենքը ճանաչել օրինական:
3. Բազմաբնակարան բնակելի շենքը և դրանով զբաղեցված 1400.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

02 օգոստոսի 2023թ.  
ք. Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 օգոստոսի 2023թվականի N 906

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
**ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1597-Ն և 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումներով և հիմք ընդունելով «ՀԱՅԿ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Մելանյա Պետրոսյանի 2023 թվականի օգոստոսի 3-ի դիմումը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1.«ՀԱՅԿ ՇԻՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Երևան-Սևան մայրուղի 46-47կմ 1 հասցեում գտնվող 07-001-0795-0036 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26062023-07-0049, գաղտնաբառ՝ 4IRCFJJ3563I):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ